ՑԱՌԱՋԱԲԱՆ

Եւրոպական ազգերի գրականութեան մէջ ժողովրդական բանահիւսութիւնը նշանաւոր տեղ է բռնում. նոքա՝ իբրև քաղաքակրթութեան աւելի բարձր աստիճանի ազգեր՝ շուտ կարողացան ըմբռնել ժողովրդական բանահիւսութեան արժէքը, ուստի և ոչ մի ջանք չխնայեցին կատարելապէս ուսումնասիրելու այդ առարկան և օգտաւէտ գիտութիւնների շարքը դասելու։

Անցեալ դարու վերջերից արդէն ժողովրդական բանահիւսութիւնը գիտնական աշխարհի զբաղման և հետաքրքրութեան նիւթ դարձաւ. ոչ միայն անհատներ, այլ և ընկերութիւններ անդամ կազմուեցան ժողովրդական կեանքի և մասնաւորապէս անգիր բանահիւսութեան ուսումնասիրութեամբ զբաղուելու համար։ Գրիմ եղբայրների և նոցա հետևողների ջանքերով ժողովրդական բանահիւսութիւնը արհամարհանքի աստիճանից լուրջ գիտութիւնների կարգը բարձրացաւ։

Ժողովրդական բանահիւսութիւնը [1]) գրականութեան մի ճիւղն է, երկուսն էլ մարդկային մտքի, զարգացման և երևակայութեան արդիւնք. միայն մէկը անհատի, միւսը բազմութեան ստեղծագործութիւն է. մէկի մէջ երևում է բանաստեղծի անձնաւորութիւնը, միւսի մէջ ժողովրդի հոգեկան դրոշմը։

Ժողովրդական կեանքի և գաղափարների բնական արտացոլումն է բանահիւսութիւնը, որ իւր պարզ և անպաճոյճ ձևերով, ներքին և արտաքին ներդաշնակութեամբ, բարձր գաղափարներով և ազնիւ զգացումներով նշանաւոր տեղ է բռնում գեղարուես-

---

[1]) «Բանահիւսութիւն» գործ ենք ածում այստեղ ժողովրդական անգիր գրականութեան նշանակութեամբ։